


ՏՆՕՐԷՆ-ՆԱՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ ե գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՈՒԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղին. ողջ դի. 80

» » վեցամսեայ » 50

ՕՏ առ երկիրներ տարեկան Ծրանք 25

» » վեցամսեայ » 14

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

» » Երկու Ժամկէ Կամպարտ

ԹՈՔԱՏԻ ԶՈՒՆԵՐԸ

Չենք գիտեր թէ Թորատ զրկուած քրն-
նիչ յանձնաժողովը քանի՞ի պիտի... ինչեցնէ
կոտորածի զոհերուն թիւը և թէ Սրբ. Ֆիլիբ
Քլերիկի բողոքը արդիւնք մը պիտի ունենայ
ոճրագործները երեւան հանելու և պատժե-
լու համար :

Մեր առած տեղեկութիւններուն նայե-
լով՝ մինչեւ ապրիլի սկիզբը գտնուած և գիտ-
ցուած սպաննալներու թիւը կը հասնէր 140ի.
Իսկ վերաւորեալներ, միայն քաղաքին մէջ,
80 հոգի են որոնք հետզհետէ մեռած են :
Քաղաքին մէջ կողոպտուած տուները թուով
300 են, իսկ խանութները 60 :

Կոտորածը քաղաքին մէջ տեւեր է չորս
ժամ անընդհատ, յաջորդ քանի մը օրերն
ալ աւարառութիւն տեղի ունենալով քաղա-
քին եղբորը գտնուած հայաբնակ տուներու
մէջ :

Աւասիկ այդ ջարդին զոհ գացած նահա-
տակներու անունները զորս Թորատէն խմբա-
բուծեալն ուղղուած թղթակցութենէ մը կը
քաղենք :

* * *

Սապրն-Խանէ թաղը Բոլատեան Յակոբի
տան մէջ տանքմէկ հայ սպաննուած :

Գայամահալլէի մէջ Թուրք մը իր տան
ախոռին մէջ երեք հայ կը պահէ, և յետոյ
զուրսէն թուրքեր կանչելով հոն սպաննել
կուտայ :

Ս. Քառասուն Մանկանց Եկեղեցին թա-
լանի տրուած և տաճարին ներքին մասերն
աւերուած են :

Հայ կաթողիկոսատիկան մը՝ Մուղալեան
Յարութիւն՝ հայերը պաշտպանած ըլլալուն
համար սպաննուած է :

Գայա թաղէն ծանօթ Մնիկեան Խաչիկ
էֆ.ի կինը զինուորներէն սպաննուած է :

Ճամիի Քէպիլի թաղէն Ալէկէօլեան Ու-
կանը հրացանի բռնուած է, ջարդին առեն
անձնապաշտպանութեան համար զէնք գոր-
ծած ելուն պատճառաւ :

Չափողունեան Յովհաննէսի դուստրը Զա-
րուհի՝ զինուորներու վայրագ լլկումէն կիսա-
մեռ վիճակի մէջ կը գտնուի :

Պիզէրի գիւղին Ս. Օհան Ոսկերեքա-
նի վանքը, տաճարը, գանձարանը ամբողջո-
վին կողոպտուած են :

Վանքին երկու միաբանները՝ Տ. Մա-
նուէլ և Տ. Մարտիրոս չորսշար սպաննուած են :
Նոյն գիւղի գրեթէ բոլոր երիկմար-
դիկը սպաննուած են :

Սլժամպուլեանի կինը՝ Հայկանոյշ և թիւ-
թիւնճի Պետրոսի կոյս աղջիկը գիշեր առեն
առեւանդուելով լեռը տաքուած և բռնա-
բարուած են :

Պիւսկիւնճիկ գիւղը աւարի տրուած և
տաններէն անձ սպաննուած են. իսկ միւս-
ներն առ ահի խալամութիւնն ընդունած են.
ատոնցմէ սպաննուած Սահակեան Գրիգորի
կինը խալամական օրէնքով իր տաքերով հետ
ամուսնացուցեր են :

Վարազ գիւղն ամբողջովին կողոպտե-
ւած և չորս մարդ սպաննուած է :

Թուրհալի գիւղախմբին ենթակայ՝ Ար-
խով գիւղի սակաւաթիւ հայերն ալ ամ-
բողջովին ջարդուած են, բայց մէկ աղջիկէ որ
անշուշտ հարէմի մը մէջ կը գտնուի այժմ :

* * *

Այն անմեղ զոհեր գուցէ իրենց գերեզ-
ման իսկ չունեցան : Կարճանագրենք իրենց
անունը մեր թերթին ճակատը՝ իրենց սրտա-
նուէր մահարձան մը՝ մեր ամենուս սուգովը
ընթացածուած ու արցունքովը ողբուած :

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Բարեգործութիւններ կան որոնց գա-
ղախարք ու գոյութիւնը առեւի ախոյաւար
ու կազմարիչ բան մը ունի իր մէջ՝ քան
մեծագումար նոյնապատիւներ որոնք
անակնկալ մը լին : Այսպէս, երբ Հայաս-
տանէն Կովկաս ապաստանած տարեկան հա-
զարաւոր հայ գաղթականներու պատկաւ-
ման ու ուսուցման համար Թիֆլիզէն սկը-
սելով ամեն կողմ մասնախումբեր կը կազ-
մուէին ու հանգանակութիւններ կը կատար-
ուէին, շուտեցաւ յանկարծ թէ Տանիսա-
րայի քաղաքին իր հովանաւորութեան տակ
Յանձնաժողով մը կազմուած է նպաստ հա-
ցնելու համար հայ կաթողիկոսներուն : Միև-
նի մայիսի սկիզբը՝ զրաւիս բաւարիչին
նախաձեռնութեամբ հասցուած գումարը կը
հասնէր 16,000 ռուպլիի : Բաշխուրք կը կա-
սարուի Թիֆլիզի դանիական հիւպատոսին
միջոցաւ :

Այն միջոցին որ մեծ արհուրիւնները
կատարի մեցում մը կը մղէ իրարու դէմ՝
իրենց շահադիտական ձգտումները առաջ
սանելու համար, եւ երբ քաղաքային զորա-
կեր կը բոքարին ամեն ստպեական զգա-
ցում՝ սեղանաւորական հաշիւներու առջեւ,
սխալագոյնով կը համակոխին՝ ինքնուրոյ
Տանիսարայի պէս պզտիկ քաղաքաւորութիւն
մը որ իրար կ'անցնի, կը յուզուի, եւ չի
կրնար զիսկապիտան ճախրով բան մը
ընել, գոնէ դրամով օգնութեան ձեռք կը
կարկառէ՝ տարաբար ու հաշմական հայե-
րու :

Եւ մի՞ մոռնա՞ք որ Տանիսարայի քա-
ղաքին մայրն է Եփեսոս քաղաքին. երբ
իր որդին Արեւիկ մեջ մահու եւ կենաց
պայքարներու մէջ կը տառապի Յունաստ-
անի ժողովրդի պատերազմէն հետեւեալով, ինք
իր կենցաղական սրտի հոգածութենէն ու կա-
րեկցութենէն թափան մը կը նշարէ նաեւ
Քոթեմիսիէ շատ հեռու գտնուող արեւելեան
հին ժողովուրդի մը : Այս պայմաններու մէջ,
իր նախաձեռնութիւնը կրկնապէս երախտա-
գիտութեան արժանի է մեզի համար :

ՔՐՕՆԻԿ

Պէն-էլ-Սուրէնի յորեքարը պաշտօնէ կը քաշուի
և այդ հրաժարումով մագաղաթեայ զէնք մ'է որ
կանչեալի ազգային շրջանակէն :

Բարձրահասակ, վառ, բարակ, մոմայի շար-
ժուած բով, թափանցիկ ազգային տշերով, կէս դա-
րու պաշտօնաւարութեան մէջ հազիւ բուսած մո-
րաբով բաճանայ մ'է Տէր Կարապետ հայրը որ
Երեսփոխանական ժողովին մէկ արդումով կը գա-
տապարտուի ցիւեան : ... Հանգստեան թոշակի :

Դէմքին վրայ միշտ ժպիտ մը, եօթնամասունամ
եայ գործածութեամբ չի մաշուած ժպիտ մը որուն
մէջ փորձառութիւնը և անգիտակցութիւնը գիրար
կը բղկտեն. ժպիտ մը որուն մէջ tact կայ՝ բայց ոչ
խելք, մին այն tactիւն սակայն որ յաճախ խել-
քէ աւելի կարծեն :

Տէր Կարապետ հայրը ազգային և կրօնական
գործերու վրայ այն գիտակցութիւնը ունի ինչ որ
ունի թրամուէյի մը folioլիթօրը... Երեկոտարա-
նութեան վրայ :

Սակայն Առաջնորդարանը միշտ կը բաղէ ինչ-
պէս կը բաղէ գաւառապալիկները :

Եւ բոլոր թէ խելքային տիեզերական համար ու-
նեցող Պատրիարքի մը ամբողջ խնամութիւնը,
հաստատաւորութիւնը և կամքը խորտակուելու,
փշրուելու, վտանգվելու մէջ գտնուած են երբեմն մի-
եւնոյն Պէն-էլ Սուրէնի խաթիւներու վրայ :

Եւ ո՞րն է տաք գաղտնիքը :

Տէր Հայրը գաղտնի չունի իր յաջողութիւնները և յախտենական տեղապահութիւնը իր նշանաւորները կը պարտի :

Անհատները զոգադիպութեամբ մը դարձան մեծ մարդերէն մէկուն *deviser* ընտրած է իրեն այդ եզրապատկեր տարւոյն :

Պիլմարք՝ մատնիին վրայ Նիշէլօ գրել տուած է . իսկ մեր աստուծոյն փոխան մատնիին՝ կնիքին վրայ փորել տուած է . . . Անգամայի :

Նիշէլօ և Անգամայի միեւնոյն լոտը կը նշանակեն գրեթէ . մին ուսանելէ, միւր արարելէն : Երկու ազգ որ իրարմէ չեն տարբերիր ուղտոտութեան տեսակէտով, եթէ երբէք ներքին է ուսանողը դատել . . . Երուսաղէմ ու խաթի գաղտնիքներու վրայէն :

Տեղւոյն, օգին, մարդերուն և իրերուն, բարքերուն և սովորութիւններուն, թաղական ազանքունքէֆին և ասոնց երբեմնի ամենակարողութեան վրայ մօտէն և խղճնորդն ուսումնասիրութիւններ կատարելէն ետքը, քննելէն, տկուային ցարնելէն վերջը և այսպէսով փորձառութեան ահագին որոշար մը կուտակելէն՝ զկնի՝ Քրիստոսի այդ աշակերտը, վարպետ այդ քահանայն, այդ բոսին կայանք տուա :

Ուղղութիւնը գտած էր . ըստագոյնը ուղղութեանց՝ անխախտ կենսալու համար ամբողջ մը վրայ որ տեղապահական ըլլալուն համար նախանշելի ըլլալէ չի դադարիր :

Եւ ուրիշ կերպ չէր կրնար ընել երկրի մը մէջ ուր ասկէ քսան երեսուն տարի առաջ ժառանգութիւնները կը բաժնէին . . . պատերը ծակելով :

Այս օր երբ հրամեշտ կուտայ ժողովներուն սըրահէն, ամեն ոք իր տոջե կը խոնարհի յարգանքով ողջունելու համար անձնաւորութիւն մը որ քառասուն տարի շարունակ գործի վրայ էր . . . տունց երբէք զորք մը տեսած ըլլալու :

* *

Հրամեշտի շարքու մը մէջ ենք :

Պէնյեանի խումբը վաղը գիշեր իր վերջին ներկայացումը կուտայ, ասելի զով քաղաքի մը մէջ փնտռելու համար . . . այրած սրտերնուն փոփոխութիւնը :

Անշուշտ բարիք մը ընելու ամեն արամադիր սրտեր պիտի ուզեն վերջին անգամ մ'ալ քաջութեան այդ խումբը որուն մէջ թրեանցներ, Պէնյեաններ և Նուարդներ կան որոնց անցընել տուած հաճելի ժամերը դեռ մոռցուած չեն :

Վաղուան յայտագիրը երեք սիրուն գաւեշտներէ կը բաղկանայ, որոնց գլխաւոր դերերը Թըրեանց պիտի կատարէ, ինչ որ շատ բան ըսել է :

Խեղճ դերասաններ, իրենց սեգօնը լուրջ կտորներով սկսան և այսօր գաւեշտով վերջացնելու հարկին մէջ կը գտնուին :

Արդէն աշխարհիս մէջ ո՞ր բան ասանկ չէ :

Յ. Ա.

ԱՐԵՆԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Ա.

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

Նիհար, կարճահասակ, չղուտ, արթուն ու մտացի աչքերով, մէջքերէն պզտիկ սուր մը կախուած՝ ֆրանսացի զինուորներու տարազով մարդիկ են յոյն զինուորները : Հագուստը կը թափթփի իրենց վրայէն և կարծես խակ դերասաններ են որոնք թատերաբեմի վրայ զինուորի դերը կը կատարեն : Ընդհակառակը, սպանները վայելուչ կերպով կը կրեն իրենց համազգեստը որ շատ գեղեցիկ է : Վէս ու առնական կերպարանք մը ունին, պատկառանք կ'ազդեն և շատ կը սիրուին յոյն կիներէն : Դրեթէ ամէն ամուսնացած կին բանակի սպաններէն սիրահար մը ունի . բարքերու մէջ մտած սովորութիւն մըն է ասիկայ : Ամառը, Փալէրոյի ծովափին վրայ ակնահաճոյ տեսարան մըն է դիտել բոլոր այդ շողջողուն համազգեստները իրենց կապոյտ,

կարմիր, փետրաւոր գլխարկներով, զեղանի Աթենուհիներու փէշերուն շուրջը : Յոյներուն համար սպանները իրենց գլխաւոր զարդերէն մէկն է : Զբօսաւայրները, թատրոնները, հրապարակներուն և երեկոյթներուն մէջ, անոնք գլխաւոր հրապոյրը կը կազմեն . օրաթերթներու քրոնիկներուն անոնք ամենէն աւելի նիւթ կը մատակարարեն իրենց սիրային շահատակութիւններովը կամ թղթախաղի արկածներովը : Օր չ'անցնիր որ իրարու մէջ մենամարտութիւն մը չ'ունենան :

Հէլլենացիները, որոնք ընդհանրապէս լուրջ ու ողջախոհ մարդիկ են, հաշտ աչքով չեն նայիր սպաններու այս ընթացքին և ներքնապէս համարում չունին անոնց վրայ : Նոյն խակ ամբողջ բանակին վստահութիւն չէ ներշնչած իրենց : Թերթերը միշտ արհամարհանքով ու քննադատութեամբ կը խօսին բանակին վրայ և մասնաւորապէս Աֆրօքսիս, Աթէնքի գլխաւոր օրաթերթը, բուռն պայքար մը մղած է, երկու տարի առաջ, բանակին և մանաւանդ բարձրաստիճան սպաններու դէմ : Այս պայքարին արդիւնքը այն եղած է որ, օր մը, Աթէնքի և Բիրէի բոլոր սպանները հաւաքուելով՝ յարձակած են Աֆրօքսիսի խմբադրատան վրայ, մեքենան ջարդ ու կոտոր ըրած, բոլոր գրասենականները կործանած ու ապակիները կոտորտած են : Աֆրօքսիսի տնօրէնը 200,000 տրախմի կորուստ ունեցած է և ըստիպուած է նոյն օրը կէս թերթ միայն հրատարակել, ուրիշ տպարանի մը մէջ և այդ կէս թերթը նորէն ծայրէ ծայր լեցուցած է բանակին դէմ կատարի քննադատութիւններով : Տեսակ մը « զարկ, բայց մոտիկ ըրէն » կրկնութիւնը :

Ո՛չ, անկեղծօրէն ըսենք, Յոյները երբեք չեն պարծենցած իրենց բանակովը : Յոյսերնին անորմէ աւելի Պարթենոնի վրայ դըրած են և միշտ կը հաւատան թէ Աթենասի վահանը լաւ է օտար յարձակումներու դէմ զիրենք պաշտպանելու համար :

Մինչեւ այս վերջին դէպքերը եւրոպա իրաւունք տուած էր յոյներուն՝ այդ պատճառները ունենալու : Չափազանցութիւն չէ ըսել որ Նաւարէնի ծովափնորը, ուր Ֆրանսա, Անգլիա և Ռուսիա բնաջինջ ըրին թուրքեզիպտական նաւատորմը, Փրիզիսի, Պոլիկէսի և Իկաինոսի պարտական են Յոյները : Եւ անկէ ետքը գրեթէ միշտ եւրոպական տէրութիւններու չփացած տղան եղած էր Յունաստանը : Անգլիա, 1864ին, իրեն ընծայած է Յոնիական կղզիները, 1878ին Յունաստան թեսաղիան ուղած է և 81ին տուած են զայն իրեն՝ Եպիրոսէն ալ կտոր մը միասին : Իր անկախութենէն ի վեր առանց պատերազմի և միմիայն սպառնալիքներով կամ խնդրանքներով յաջողած է ուղածը ձեռք բերել :

Բայց եկաւ թաղաւոր մը որ՝

« Ո՛չ ճանաչէր զՊարթենոն »

Երբ 1889ին Վիլհէլմ կայսրը իր քրոյ Սօֆի իշխանուհիին ամուսնութեան առթիւ Աթէնք կուգայ, Աթենացիները կը կարծեն թէ կայսրանէն կառք նստելուն պէս, պալատ երթալէ առաջ Ակրօպոլիսը պիտի այցելէ : Թուրքիոյ բարեկամը այդ ուխտագնացութենէն առաջ կը փափագի զօրահանդէս մը տեսնել . . .

Երիտասարդ կայսեր այս սրբապիղծ նախատինքը միշտ դաւանութեամբ կը յիշեն Աթենացիները և այդ օրէն ի վեր Գերմանիոյ կայսրը, Սօֆի իշխանուհին, Կոսթանթին գահաժառանգը գրեթէ ասելի դարձած էին ժողովրդեան :

Հիմա դէպքերը ցոյց տուին որ արդար էր այդ ատելութիւնը :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վեհափառ Կաթողիկոսին հրամանաւ՝ Ամերիկայի Հայոց հովութիւնը երկուքի բաժնուելով, Արմաշի Գաբրիելանքին նախկին սաներէն Վաղինակ և Մայիկոյ վարդապետներուն յանձնուած է, առաջինը Բրովիտէնսի ու չրջակայից, և երկրորդը Ուսթըրի ու չրջակայից համար : Երկուքն ալ ճամբայ ելած են արդէն :

* *

Նոյնպէս Նորին Ս. Օծութեան տնօրինութեամբ, Ատրպատականի առաջնորդ կարգուած է Տ. Խորէն Եպիսկոպոս Ստեփանէ՝ Տ. Յովնէի վարդապետ Սարաճեանի տեղ որ Սպահանի և Հնդկաստանի առաջնորդ կարգուած է :

Մշակի մէջ կը կարգանք թէ վաճառական Յովհաննէս Դաւիթեան Խուրադեան որ ապրիլ 26ին վախճանէր է ի Թիֆլիզ, իր ամբողջ հարստութիւնը — 150,000 լուպլի — կտակէր է Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութիւնն որ պիտի յատկացունէ զայն ապաստարան, դպրոց, աղքատանոց, հիւանդանոց բանալու :

Պօղոս փաշա Նուպար երէկ առաւօտ ընտանեզ մեկնեցաւ քաղաքէս Աղէքսանդրիա, և իրիկունը Մէսաթրիի շողեհաւով ի Մարսէյ : Իր ամառնային արձակուրդը պիտի անցունէ Զուրիցերիա :

Բաղմաթիւ պաշտօնական անձինք և աղգայինք թէ՛ կայսրան գացած էին և թէ՛ չուգենաւ, ողջերթի :

Ընթերցասիրաց ընկերութեան դործադիր ժողովը մտադիր է ընտանեկան նուագահանդէս մը կազմակերպել իր սրահին մէջ, աշակցութեամբ Տիկին Վիրժինի Նուարդի :

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Խմբագրութիւնս իր խորին շնորհակալութիւնները կը ներկայացնէ Էմիլբըն Կագեր, Ֆարս'Ալիք-սանսի, Բրօկի, Լա Ռեֆօն, Ժուլիան Էմիլքի, Մեանքիքի Էմիլքի, Իմբարցիակ, Քաթրօն Եւ Թանիսթրօս պաշտօնակիցներուն որոնք համակրանքով ողջունեցին Փարոսին երեւումը, յաջողութիւն մաղկելով մեր հրատարակութեան :

Նոյնպէս շնորհակալութիւն այն ամեն բարեկամներուն որոնք ընթացիկ կամ գրաւոր կերպով համակրանք արտայայտեցին՝ Եզրպոսի մէջ հայերէն թերթի մը երեւման առթիւ :

Ա Ձ Դ

Ամեն անոնք՝ որոց մեր թերթը կը զրկուի և որ առաջին երկու թիւերը մեզ չ'են վերադարձներ, իրրու բաժանորդ պիտի նկատուին :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նախարարաց Խորհուրդը հինգշաբթի առաւօտ նիստ ըրաւ ի Ռամիէ, Սան-Սթեֆանօ օթէլը, Մուսթաֆա Ֆէհմի փաշայի նախագահութեամբ :

— Բարձր Խորհիւն երէկ առաւօտ իրենց կայութեան ընդունեց առաւելան ընդհ. հիւպատոսը՝ Պ. Բոյանտէր : Յառաջիկայ երկուշաբթի ալ պիտի ընդունի Աղեքսանդրիոյ ֆրանսական հիւպատոս Պ. Ժիւառը :

— Մարզահամարի արդիւնքէն կ'երևայ որ Գահիրէի բնակչաց թիւն է 330,000 :

— Էյ-Մուշիր լրագրին տնօրէնը, Պ. Սարգիս, որուն համար ծանուցուեցաւ թէ գատի պիտի կոչուի, յայտարարեւ է գատական իշխանութեանց՝ թէ իրեն յանցանք մը իրեն վերադրուած հրատարակութիւնը պարզապէս եւրոպական թերթերու արտասուլումն էր, Գերմանիոյ կայսեր քաղաքականութեան վրայ կը հաւաստեն թէ առ այժմ գատը պիտի յետաձգուի, վասն զի զրկուած կոչնագրին մէջ գրուած է եղբւր թէ Էյ-Մուշիրի տնօրէնը Վիլհէլմ Բի գէմ ըրած անձնական ամբաստանութիւններուն համարը պիտի տայ, ինչ որ սխալ է :

— Առջի իրիկունը պզտիկ չիթութիւն մը տեղի ունեցաւ Գաֆէ Ինիվէրսէյի առջեւ : Պատճառը արար լրագրավաճառ մըն էր որ ձեռքի թերթերը վաճառելու առթիւ հայտալից լեզու մը կը գործածէր քրիստոնեաներուն դէմ : Սրճարանի յաճախորդներէն մէկը միջամտեց զայն պապանքեցնելու համար. խումբ մը տեղացիներ լրագրավաճառին կողմ բռնեցին, և վերջապէս Մուսթաֆա պահականջին յանգեցաւ գործը :

— Ժողովուրդ էժիքսիէնի մէջ կը կարգանք թէ Պ. Վէյսիէ, Հավասի գործակալութեան Գահիրէի տնօրէնը, նոյն ընկերութեան գերտնօրէն Պ. Ռէյմոնի հետ չորեքշաբթի առտու կայարանէն կառք մը կը վարձէ տուն երթալու համար : Եւ երբ հասնելէ վերջ կառապանին վարձքը վճարելու վրայ էր, այս վերջինը, իրեն տրուած գումարէն դժգոհ, կը յարձակի Պ. Վէյսիէի վրայ և կաշխատի զայն խեղդելու :

Այդ միջոցին հոն ժողովուած տանի չափ պէրպէրներ՝ իրենց անկցութիւնը նուիրած են կառապանին և այդ խոստանք մեռցնելու ատիւհան ծեծած է երկու ֆրանսացիները :

62 թիւ ոստիկանն եւս պէրպէրներուն հետ գտնուած է այդ ծեծկըւտքի պահուն : Մինչեւ իսկ պահականոցին մէջ ուր Պ. Վէյսիէ և Պ. Ռէյմոն տարուած էին, յիշեալ ոստիկանը Պ. Ռէյմոնի ձեռքէն խլելով գաւազան մը, զայն կոտորած է Պ. Վէյսիէի կրունակին վրայ :

Պահականոցին պետը վերջապէս յաջողեցաւ բանտարկել այդ շատ աշխոյժ ոստիկանը և անմիջապէս արձակեց Հավասի կրկին տնօրէնները :

Ֆրանսական հիւպատոսարանը այս խնդրով զբաղելու վրայ է :

— Արապի փաշա իր կրտսերորդին Սէյլան կղզիէն Անգլիա զրկելու է սամուկը կատարելագործելու :

ՀԵՌԱԳԻՐ

10 ՆՏՈՆ, 26 Մայիս — Տէրութիւնը, ընդ որս և Թուրքիոյն, համաձայնած են Պաթէնպէրի Զրամձ Ժողձի իշխանը կրէտէի կառավարիչ անուանելու համար :

Տէրութեանց հաւարտական ծանուցողին հաւանեցաւ Գերմանիա մասնաւորապէս Ռուսիոյ անկախութիւնը Գերմանիա կը փափագի նախ կարգադրել պատեւրազմական տուգանքի խեղճը և յունական երեւմտորը ամուր հիմերու վրայ դնել որպէսզի միեւնոյն ժամանակ զոհ մնան յունական արժեթիւղթ ունեցող . . . գերմանացիները :

10 ՆՏՈՆ, 27 Մայիս — «Սթանտարտ» կիսամայթէ Բ. Դուռը որոշեւ է անսահման կերպով երկարած զինադադարը, իսկ կը մերժէ նոյն իսկ րանակցութեան մանեղ Թեստիլայէն հրաժարելու խնդրին վրայ : Միւս կէտերը Տէրութեանց իրաւարարութեան կը թողու :

— Տէրութիւններէն ունեւ կը փափագին որ Թեստիլայ օսմ. գրաւումը շարունակուի մինչեւ պատերազմական տուգանքին վճարումը, իսկ Մեծն-Բրիտանիա հաստատապէս կը զգուշանայ ասոր :

10 ՆՏՈՆ, 28 Մայիս — Ճիշդ է որ Մեծն-Բրիտանիա կը զգուշանայ որ թուրքերը երկարատեւ կերպով գրաւեն Թեստիլան, իսկ անհիմն է այն զրոյց իրր թէ սղառնոցած ըլլայ բաժնուիլ եւրոպական համաձայնութեանէն :

(Ռիւքեր)

ԲԱՐԻՉ, 26 Մայիս — Տէրութեանց պատասխանը կը հաւանի Թեստիլայ սահմանագծին փոխում ման Նոյնպէս պատերազմական տուգանքի մը վճարման, որուն գումարը չ'որոշեւ : Կը մերժէ ամբողջովին ջնջել հիւպատոսական գաշնագրիները :

— Թան կը կարծէ թէ Թուրքիա պիտի հաւանի Տէրութեանց տուած չափաւորութեան խորհուրդին :

ԱԹԵՆՔ, 26 Մայիս — Արտաքին գործոց սղառնոստան մէջ միջադէպ մը պատահեցաւ. իտալացի երեսփոխան Տի Ֆէլիչէ անարգեց նախարարապետ Պ. Ռալլին : Ռալլին անմիջապէս Բիրէն իտալական գրահաւորով մը ձաքայ հանեց Տի Ֆէլիչէն, արգիլելով անոր Յունաստան վերադառնալ :

ՀԱՆՆԱ, (Կիւտէ) 26 Մայիս — Ապստամբ կրակի տուին Ռէթիմոյի շրջակայները :

ԱԹԵՆՔ, 26 Մայիս — Մէնթի Կարիսպոյի այցելութիւն տուաւ Պ. Ռալլին որ շնորհակալութիւն յայտնեց անոր՝ Յունաստանի նուիրած օժանդակութեանը համար : (Յայտնի է թէ Կարիսպոյի որդին իտալացի կառավարաց զուխն անցած՝ մասնակցեցաւ պատերազմին) :

ՀԱՆՆԱ, 27 Մայիս — Երկուրալի զրոյցներ կը շրջին իսլամներու բռնելիք ընթացքին ինչպէս նաեւ անոնց խռհուրդներուն վրայ, այն պարագային մէջ ուր թուրք զորքերը մեկնին կղզիէն : Ծովակալները կառավարիչը պատասխանատու պիտի բռնեն՝ եթէ խռովութիւնք ծագին :

Հալաս

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Կ. ՊՕԼԻՍ, 28 Մայիս — Բ. Դուռը իր պատասխանը տուաւ : Հաշտութեան պայմանները խնդիր չընեն, այլ կըսէ թէ ինք պատրաստ է Տէրութիւններուն հետ բռնակցիլ՝ երբ զինադադարի ձեւակերպութիւններն ուսարտած ըլլան : Դուռը կը փափագի որ հաշտութեան պայմանագիրը կնքուի Ֆարսալս :

ԱԹԵՆՔ, 28 Մայիս — Հեղին կառավարութիւնը յիշատակագիր մը ուղղելով Տէրութիւններուն կը թողոքէ սահմաններու փոփոխման առաջարկին դէմ, որ նոր ծախքերու գումար պիտի բանայ՝ նոր սահմանադրի մը ամրացնել հարկ ըլլալով այդ պարագային մէջ : Յունաստան շատ փոքր գումար մը միայն կրնայ վճարիլ իրեն պատերազմական տուգանք, վասնզի անկարելի է իրեն թէ՛ տուգանքի մեծ գումար մը վճարել և թէ՛ հեղինական արժեթիւղթ ունեցողներուն պահանջը :

— Թեստիլայ օսմանեան բանակը յարատեւ կերպով կը զորացուի : Այժմ գրեթէ 200,000 հոգի կը հասնի :

10 ՆՏՈՆ, 28 Մայիս — «Թայմ» կըսէ թէ Յունաստան կը յուսայ փոխառութիւն մը կնքել, Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ կողմէ երաշխաւորեալ, պատերազմական տուգանքը վճարելու համար :

ԱՐՁԱԳԱՆԳ

ՍՅԵՐԼԻՆՆԵՐՈՒ ՄՐՅՈՒՄ

Լոնտոնի մէջ մինչեւ հիմայ չի տեսնուած ձուխտեամբ պիտի տօնուի այս անգամ Անգլիոյ թագուհւոյն զահակալութեան վաթսուներորդ (աղաւանդեալ) տարեդարձը :

Արքայական թախտին անցնելիք փողոցներուն պատուհանները վարձելու համար՝ երկու միլիառ ֆրանքի գումար մը պիտի ծախուի :

Տարին 18,000 ֆրանքի վարձուած տունի մը երեք պատուհանները երկու ժամուան համար 15,000 ֆրանքի վարձուած են :

* * *

ՀԱՅԵՐՈՒՆ ԻՆՊԱՍՏ

Հայաստանեւոր միջազգային միութիւնը միութիւն մը դուստրեց ի Լոնտոն մայիս 7/19ին ընդ նախագահութեամբ Հէրֆորտի եպիսկոպոսին Տրթ. Բէրրովալ լատի Հէնրի Սթրէյթսթ, քոֆէսթօր Լէրմուս և Հայր Շարմէլման բանախօսութիւններ ըրին : Հայր Շարմէլման, 1895 և 1896ի ջարդերը նկարագրեց և այս առթիւ պարգեց թէ՛ Արեւելքի քրիստոնէից նիւթական տկարութիւնը՝ շատ մը տարբեր դասանանքի բաժնուած ըլլալուն վերադրելու է :

Միթիւնի միջոցին Պ. Կըստօֆօնի մէկ նամակը կարգացուեցաւ որով 1250 ֆրանքի գումար մը զըրկած ըլլալը կը ծանուցանէր Հայաստանեւոր միութեան :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Ասեղ. — Աղեքսանդրիա. Անհատներ կապանք ձեր խոստացած յօդուածին :

Պ. Օ. — Աղեք. — Շնորհակալութիւն ձեր արտաստած անկեղծ զգայուններուն համար :

Ա. Ն. — Թանքա - Ուշի ուշով կարգացինք ձեր նամակը, իսկ կը կարծենք թէ գեւ շատ կանուս է պատասխանելու համար :

Սթ. Թ. Գ. — Գանիւրէ. Նի՞ք ուղիք խնայաբարտուն զրկել, մեծ հոճոյք պիտի պատճառէք մեզի :

Կ. Կ. — Գանիւրէ - Երբէք :

Ծ Ի Ծ Ա Ղ

Նոր քերականութիւն :

Հանրային անականք երբ երկ մարդու համար կը գործածուի՝ պատահեալ է, իսկ երբ կ'իշխան մը համար կը գործածուի . . . հիշեալ հակառակը : Եւ յանգանք Սահակ-Մեսրոպիքն չէ :

Սեփոն աղան (անուր կարեւորութիւն չունի) օր մը ցերեկ ասեմ յանկարծ տուն կը վերադառնայ եւ առանց դռանը զարնելու կնոջը ննջասեմեակը կը մտնէ :

Աստուած իմ, ինչ անելի տեսարան . . . իրիկը այնպիսի բազուկներու մէջ կը գտնուի որ ոչ աւանդունքն են եւ ոչ ալ . . . քիչնաբոլիք :

Թոքերուն եւ կոկորդին ամբողջ ուժովը եւս հաքել շեքով մը գոր ասանկ պարագաներու կը վերապահեն խաբուած երկները :

— 2ի խպնած, անամօր, հիմայ, շու's եւայն, կսկսի պօռալ :

— Ոսէր պագնեմ, Սեփոն աղա, ասանկ ավագ ավագ մի պօռաւ, հիչ ճեյլիսե սա եապանքի մարդէն խպնէ :

Թալլօ

Ա. Զ. Դ. — Եւրոպացի բնասանքի մը համար վարպետ Հայ խահարարուհի մը կ'ուղղուի : Դիմել ՓԱՐՈՍԻ խմբագրատունը :

Գանիւրէի մէջ ՓԱՐՈՍը ձեռք կը ծախուի՝ Օթերայի դէմ, փողոցի անկիւնի լրագրավաճառին խանութը :

Le Gérant: HENRY SAKAKINI

3. ԵՒ 4. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱՆՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԷԹԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՐԱՆՈՒՄ ՄԵԾՐԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱԳԱՍ»
ԽԱՌՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՄ:

ԸՆԹԱՑԻԿ ԴԻՆ ՍԻԿԱՌԷԹՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ	1000 հաար	2 1/2 Անդ. ոսկի
" Խըտիլեալ	" "	2 " "
" Պալատական	" "	1 1/2 " "
" Պոհճա	" "	1 1/4 " "
" Նաթիւրէլ	" "	1 " "
" Փոռ	" "	20 փրանք

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՋՂԱՅԻՆ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ նորաբոյժ հիւանդներու համար,
կազմուիչ սրճի, շնչառական գործարաններու, աւ-
եան եւ ջղային հիւանդութիւններու :
Կը յանձնարարուի հեծելանքի գործածողներուն :
Սեանչիլի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մքերանոց. — Ա. ՄԱՆՏՕՅԻԱՒ ԱճԼՈ—
ԵԳԻՊՏԱԿԱՆ ՂԵՂԱՐԱՆՆԵՐ ԷՊԿԵՖԻԷ, ԴԱԽԻՐԷ :

ՀԱՄՄԱՄ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ
ՀԱԼԻՄ ՓԱՇԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՑ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՅ Է

Էրիկ մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10
և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:
Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր :

Ուրբաթ և կիրակի օրերը միմիայն Էրիկ մարդոց համար
Կիրակի և տան օրերը ՀԱՄՄԱՄԸ կէս օրէն վերջ
գոյ է :

ՀՐԱՆՑ ԱՋԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ դէմ բացած խանութին
մէջ ամենէն գոյարահանները գոհացնելու
եղանակաւ կ'արդուիէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով :

Ուղղներու համար լուացարարութեան
հիւղ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախող-
ներուն ճերմակեղէնները զատ զատ լուալու
գնահատելի գրութիւնը հաստատած է :

Ի դիւրութիւն յաճախորդաց ճերմակե-
ղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուններէն
և պիտի վերադարձնէ :

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԷ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ
ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒՅՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնա-
մօք և փութով կը կատարուին :

Վայրկենական սպազմութիւն աչքեփառներու եւ տոմերու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի և սոն օրերէ առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻԵՒՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՑ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Լատին 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Գահիրէ	առտ. 4 45	—	7 —	8 15	9 30	էրեկ. 3 30	էրեկ. 4 45	էրեկ. 7 15	էրեկ. 11 —
Պէնհա	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ. 12 35
Թանթա	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	էրեկոյ 3 10	7 34	9 41	էրեկոյ 12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	էրեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՑԻՑԻ ԳԱՀԻՐԷ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Լատին առտ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Ալեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	էրեկ. 2 30	էրեկ. 4 15	էրեկ. 6 15	էրեկ. 11 —
Տամանհուր	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿՈՅՄԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՑ	ԵՐԵԿՈՅ	ԿՈՅՄԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէշ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	7 48	» կայարան	»	3 30
	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	»	7 5
Ջակաղիկ	ժամ. 1 34	8 54	Ջակաղիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւէշ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35